

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ



ՀԱՐՑ 1. Ո՞վ կարող է մասնակցել Անկախ Գործընկերների վերականգնման ակցիային:

Այն Անկախ Գործընկերները, Արտոնյալ Հաճախորդները և Սուպերվայզերները, որոնց ID-համարի գործողությունը կասեցված է Տարեկան վճարի չվճարման պատճառով (այսուհետ՝ «վերականգնված»):

Այն Անկախ Գործընկերները և Արտոնյալ Հաճախորդները, որոնց Տարեկան վճարի վճարման ամսաթիվը անցել է ավելի քան 90 օր առաջ (այսուհետ՝ «վերաակտիվացված»):

Մասնակից երկրներ՝ Ռուսաստան, Ղազախստան, Բելառուս, Մոնղոլիա, Ղրղզստան, Լիտվա, Լատվիա, Եստոնիա, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան:

ՀԱՐՑ 2. Կարող եմ արդյո՞ք վերականգնել իմ ID համարը Վաճառքի Կենտրոնում:

Ռուսաստան՝ Ոչ, Ռուսաստանում վաճառքի կենտրոնների աշխատանքը դադարեցված է: Ձեր ID համարը վերականգնելու համար զանգահարեք թեժ գիծ:

Ղազախստան, Ղրղզստան, Բելառուս, Մոնղոլիա, Լիտվա, Լատվիա, Եստոնիա, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան՝ Այո, կարող եք: ID-համարի վերականգնումից անմիջապես հետո առաջարկում ենք Ձեզ Վաճառքի Կենտրոնում կատարել պատվեր՝ Ձեր զեղչը ակտիվացնելու համար: Պատվերը կտեղադրվի 35%, 42% կամ 50%* զեղչով:

ՀԱՐՑ 3. Որքա՞ն կտևի Անկախ Գործընկերների վերականգնման ակցիան:

Ակցիայի ժամկետը 6 ամիս է՝ 2024 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2025 թվականի մայիսի 30-ը:

ՀԱՐՑ 4. Կարող եմ արդյո՞ք վերականգնել իմ ID համարը հեռախոսով:

Այո, կարող եք կապվել Herbalife թեժ գծի հետ +374 10 274 975 հեռախոսահամարով:



*Ձեղչի տոկոսը կարող է փոփոխվել՝ կախված ID համարի արգելափակման պահին ունեցած կարգավիճակից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ



ՀԱՐՑ 5. Կարող եմ արդյո՞ք վերականգնել իմ MyHerbalife.com PIN-ը, եթե այն չեմ հիշում:

Այո, Դուք կարող եք վերականգնել Ձեր PIN-կոդը MyHerbalife.com կայքում ID-համարի վերականգնումից հետո, եթե Ձեր Պայմանագրում/Հայտում նշված է արդի էլեկտրոնային հասցե: Բացի այդ, կարող եք վերականգնել PIN-կոդը՝ զանգահարելով Ձեր երկրի Herbalife-ի թեժ գծին:

ՀԱՐՑ 6. Ինչպե՞ս կարող եմ վերականգնել մուտքը դեպի իմ անձնական հաշիվ, եթե չեմ հիշում իմ մուտքանունն ու գաղտնաբառը:

Դիմեք Տեղեկատվական Աջակցության Բաժին՝ Ձեր երկրի թեժ գծի հեռախոսահամարով: Օպերատորը Ձեզ կնույնականացնի և կօգնի վերականգնել Անձնական Գրասենյակի տվյալները:

ՀԱՐՑ 7. Գոյություն ունի արդյո՞ք սահմանափակում ID-համարի դադարեցման ամսաթվի վերաբերյալ Անկախ Գործընկերների Վերականգնման Ակցիային մասնակցելու համար:

Այո, որոշ սահմանափակումներ կան: Ընկերության Անձնական Տվյալների Պաշտպանության Զաղաքականության համաձայն, այն Անկախ Գործընկերների Անձնական Տվյալները, որոնց ID-համարը չի ակտիվացվել ավելի քան 10 տարի, հեռացվում են Ընկերության համակարգերից: Գործունեությունը վերականգնելու համար այդպիսի Անկախ Գործընկերները պետք է դիմեն իրենց երկրի Տեղեկատվական Աջակցության Բաժին և ներկայացնեն լրացուցիչ փաստաթղթերի փաթեթ:

ՀԱՐՑ 8. Պետք է արդյո՞ք վճարեմ Տարեկան սպասարկման վճար՝ Անկախ Գործընկերների Վերականգնման Ակցիային մասնակցելու համար:

Ոչ, վճարելու անհրաժեշտություն չկա: Առաջարկում ենք կատարել պատվեր՝ Ձեր զեղչը ակտիվացնելու համար՝ նվազագույնը 100 Միավորի չափով: Պատվերը կտեղադրվի 35%, 42% կամ 50%* զեղչով: Ընկերությունը տրամադրում է լրացուցիչ մեկ տարի սպասարկում որպես նվեր:



*Չեղչի տոկոսը կարող է փոփոխվել՝ կախված ID համարի արգելափակման պահին ունեցած կարգավիճակից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ



ՀԱՐՑ 9. Պետք է արդյո՞ք կատարել մթերային պատվեր՝ Անկախ Գործընկերների Վերականգնման Ակցիային մասնակցելու համար:

Ձեր գեղչը ակտիվացնելու համար խորհուրդ ենք տալիս կատարել պատվեր՝ նվազագույնը 100 Միավորի չափով: Պատվերը, որի առաքումը նախատեսված է դեպի Ռուսաստան, կարելի է կատարել MyDelivery.shop կայքում:

ՀԱՐՑ 10. Կարո՞ղ է արդյոք Հովանավորը վերականգնել իր Անկախ Գործընկերներին, որոնց ID-համարները նախկինում կասեցվել են:

Ոչ, չի կարող: Անկախ Գործընկերը պետք է անձամբ դիմի իր երկրի Herbalife-ի թեժ գծին՝ հաստատելով անձնական տվյալները, կամ այցելի Վաճառքի Կենտրոն (բացառությամբ Ռուսաստանի):

ՀԱՐՑ 11. Պետք է արդյո՞ք ներկայացնել որևէ փաստաթուղթ՝ Անկախ Գործընկերների Վերականգնման Ակցիային մասնակցելու համար:

Անվան փոփոխության դեպքում՝ անհրաժեշտ է նախապես ներկայացնել անվան փոփոխության ձևի բնօրինակը, անձնագրի պատճենը և փոփոխությունը հաստատող փաստաթուղթ (ամուսնության/ամուսնալուծության վկայական կամ անվան փոփոխության փաստաթուղթ):

Բնակության և/կամ գրանցման հասցեի փոփոխության դեպքում՝ անհրաժեշտ է ներկայացնել Հասցեի փոփոխության ձևը, ինչպես նաև անձնագրի պատճենը՝ Առցանց Աջակցություն Բաժնի միջոցով MyHerbalife.com կայքի Անձնական Գրասենյակում:

ՀԱՐՑ 12. Կարող եմ որդյո՞ք որպես Հովանավոր ստանալ Ընկերությունից իմ ոչ ակտիվ Անկախ Գործընկերների կոնտակտային տվյալները, որոնց ID-համարները ներկայումս կասեցված են:

Ըստ Անձնական Տվյալների Պաշտպանության Կանոնների՝ Ընկերությունը չի տրամադրում այն Անկախ Գործընկերների/Արտոնյալ Հաճախորդների կոնտակտային տվյալները, որոնց Պայմանագրի/Հայտի գործունեությունը ժամանակավորապես կասեցված է: Մի շարք երկրներում Ընկերությունը ինքնուրույն տեղեկացնում է Անկախ Գործընկերներին ընթացող Վերականգնման Ակցիայի մասին:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ



ՀԱՐՑ 13. Որտե՞ղ կարող է Հովանավորը գտնել տեղեկություններ իր ստորադաս Կազմակերպության մասին, որը վերադարձել է Անկախ Գործընկերների Վերականգնման Ակցիայի շրջանակներում:

Հովանավորը կարող է գտնել այս տեղեկությունը MyHerbalife.com կայքի Անձնական Գրասենյակում: Ցանկացած BizWorks Plus հաշվետվության «Լրացուցիչ պարամետրերում» հնարավոր է ավելացնել նոր սյունակներ՝ «Վերադարձի ամսաթիվ» և «Վերադարձի արժավ»: Կազմված հաշվետվության «Վերադարձի արժավ» համապատասխան սյունակում նշվելու է, որ ստորադաս Կազմակերպությունը վերականգնվել է առանց Տարեկան վճարի վճարման՝ Ակցիայի շրջանակներում:

ՀԱՐՑ 14. Որտե՞ղ կարող է Հովանավորը գտնել տեղեկություններ իր ստորադաս Կազմակերպության մասին, որոնց համար արդեն հասել է Տարեկան վճարի վճարման ժամկետը:

Հովանավորը կարող է գտնել այս տեղեկությունը MyHerbalife.com կայքի Անձնական Գրասենյակում: BizWorks PLUS Կազմակերպության Ակտիվություն հաշվետվության մեջ առկա է առանձին վիջեթ՝ «Չվճարված տարեկան վճար»: Սեղմելով այն՝ Դուք կստանաք Անկախ Գործընկերների և Արտոնյալ Հաճախորդների ցուցակը, որոնց համար արդեն հասել է Տարեկան վճարի վճարման ժամկետը, բայց վճարում չի կատարվել:

ՀԱՐՑ 15. Կարո՞ղ եմ վերականգնել Պայմանագիրը՝ ընտրելով այլ Հովանավոր:

Պայմանագիրը վերականգնվում է նախնական Հովանավորի ներքո, և եթե այս Հովանավորի Պայմանագրի գործունեությունը կասեցված է, ապա՝ առաջին գործող վերադաս Անկախ Գործընկերոջ ներքո: Մանրամասների համար դիմեք Ձեր երկրի թեժ գծին:



ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Վերականգնված Անկախ Գործընկեր, Արտոնյալ Հաճախորդ կամ Սուպերվայզեր՝ Ընկերությունն դիմելու պահին ID-համարի գործողությունը արդեն կատարված է, այսինքն՝ համարվում է արգելափակված:

Վերաակտիվացված Անկախ Գործընկեր, Արտոնյալ Հաճախորդ՝ Դիմելու պահին ID-համարը շարունակում է գործել, բայց Տարեկան վճարի վճարման ամսաթիվն արդեն հասել է:

Տարեկան Վճար՝ Յուրաքանչյուր տարի, սկսած Herbalife-ի հետ կնքած Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից, անհրաժեշտ է վճարել Տարեկան սպասարկման վճարը: Եթե Տարեկան վճարը ժամանակին չվճարվի, Ձեր պայմանագիրը ժամանակավորապես կկատարվի:

